դերն ու այդեստաններըը ցոյց են տալիս, որ նա բազմամարդ է եղել, որի միայն աւերակներն են մնացել: Մի քնարերգի, ապարանքի, տաճարների եւ ամրոցների աւերակները, մեծ մասամբ սրանց թումբերը ցոյց են տալիս, որ նա եղել է հովտի թագուհին. նրա բարձր աշտարակներից երեւում է շատ հեռուից ձորախի օձապտոյտ շարժումներով առաջ սողալը: Ինչպէս նախապատմական շինուածները, նոյնպէս աչքդարեան պարիսպները ցոյց են տալիս քաղաքակրթութեան աստիճանական զարգացումը այս հովտում եւ այսօրուան թշուառ-աւերակ կացութիւնը:

Այս աւերակները եւ Սպեր անունը յիշեցնում են Ակկատ-Սումմերների Շիլպար արդիւնագործական քաղաքը, ինչպէս երեւում է նրանց հետ միաժամանակ ապրել է եւ գործել է իր երկրամշակութեամբ, անասնապահութեամբ եւ հանքագործութեամբ: Սպերի հանքերի մշակութիւնը եւ այդ բովերի հալոցներից դուրս թափուած, վերըստին քարացած նիւթերը ցոյց են տալիս արւեստների զարգացման աստիճանները: Սպեր ո՛չ միայն ծանօթ էր հելլէն եւ հռոմ պատմիչներին, ինչպէս ցոյց են տալիս աստրաբելադեանների պեղումներից դուրս բերած նիւթերը. Սպերը յայտնի է եղել նոյն իսկ Քաղդէացիների չրջանում: Բացի Սպերի մեծանճ աւերակները, հովտի հիւսիսային